ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«18» նոյեմբեր 2021 թ. № 02/03.5/6332-2021

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 22/4
m-bi-r@mail.ru

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի միջև 31.03.2021թ-ին կնքված թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/36 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները: Մասնավորապես, Նախարարության Կողմից սույն թվականի օգոստոսի 6-ին՝ համաձայն 21-14 հայտի PEUGEOT 2008 մակնիշի 523VV01 պետհամարանիշի ավտոմեքենան, տեղափոխվել է «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ, 7-օրյա ժամկետում շարժիչի վերանորոգման նպատակով, սակայն մինչ օրս չի վերանորոգվել:

Սույն թվականի հոկտեմբերի 6-ին պատրաստվել է ելից №02//5406-2021 գրությունը, որտեղ հավելյալ հնգօրյա ժամկետ է տրվել նշված ծառայությունը պատշաճ կատարելու և վերանորոգված վիճակում տրանսպորտային միջոցը ԱԻՆ ներկայացնելու համար, որից հետո ևս ծառայությունը չի մատուցվել:

Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

«Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ Նախարարությունը միակողմանի լուծում է ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/36 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.1 և Հավելված 5.1), համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.6 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվի «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ ՀՀ ՖՆ գործառնական վարչության հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169 ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Կապարող՝ Շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 12) 31 77 28, Էլ.փոստ՝ mes@mes.am

գնումների կազմակերպման բաժին
ավագ մասնագետ՝ Նարինե Փարսադանյան
Հեռ՝. 012 31 77 22